

երեւում՝ որպէս եւ իւր ունեցած բոլոր յաջողութիւններն իւր չար գործերի մէջը, նորա սրտին անպղտոր ուրախութիւն, հանգստութիւն, երջանկութիւն ամենեւին յին բերում, ինչպէս որ տռաքինութեան մի ծածուկ յաղթութիւնն է բերում։ Երկնքի խաղաղութիւնն այդպիսի մեղքերով լցուած, պղառուած սրտի մէջ երբէք չէ իջնում, չէ բնակում։

Ես իմ՝ կեսնքիս հանդարտ ընթացքն յառաջ կտանեմ, Աստուած կսիրեմ ու ինձ նման մարդին մեղք չեմ անիլ նորա առաջը պարտական չեմ մնալ. մնացածը բոլորն արգար Դատաւորին կյանձնեմ։ Կգայ օրն, որ այս աշխարհիս կեանքի վերայ պատաժ թուխ թուխ ամպերը կցրուին, մեր կեանքի երկինքը կպարզի, մուժից գուրս կգանք լոյս, պայծառ լոյս կտեսնենք, Է՛ մեղ համար մուժ բան չմնալ։ Այն ժամանակն բերկրութիւնով կասենք ինքներս մեղ թէ՛ Աստուծոյ մեղ արածը մեղ համար որչափ լաւ էր, բայց չարերն իրանք կորա՞ն։

(Պատճ.)

Գ. Ե. Ա.

ՅԱՐԴԵԼԻ ՀԱՆԴԻՍԱԿԱՆՔ

ԵԽ ՍԻՐԵԼԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՑՔ *).

Ընորհակալ եմ՝ Ձեզանից, որ՝ ատենապետ ընտրելով՝ պատռեցիք ինձ. — Սովորութիւն է, որ ատենապետը պաշտօնավարութեան մէջ մտնելու սկզբին՝ մի քանի խօսքով դառնայ իւր ընտրողներին և խոստովանուի, թէ ի՞նչպէս է ուզումարգարացնել նոցա հաւատարմութիւնը առ ինքը։ Ես մեր արժանեաց ստորութիւն պիտի համարեմ, եթէ, ոմանց առաջուայ մի քանի ակնարկութեանց համեմատ, ուզենայի ժամավաճառ լինել և հաշիւ տալ՝ թէ արգեօք բռնութիւն պէտք է գործ զնեմ իմ ստանձնած պաշտօնիս մէջ, թէ ո՞չ կամ թէ ի՞նչ արտաքին ձեւեր պէտքէ պահպանեմ նոյն միջոցին։ Ես աւելի կարեոր եմ դատում մի

(*) Այս ասենափառութիւնը խօսուեցաւ առաջին Ծնդհանուր Հայոց Ռւսուցչական ժողովի մէջ, Թիֆլիսում, անցեալ 04սուսում 23 ին Խօսելու՝ միջոցին Պ. Դափադահից մի քանի անգամ ազգարարութիւն ստանալով խօսքին երկարութեան մասին՝ ես հարկադրուեցայ տաելիքս տեղ տեղ համառօտել, թէեւ ունկնդիբները վեհանձն բարեւրտութեամբ ուղեցին ամբողջապէս լսել նոյնը, իսկ այժմ տպագրումեմ փոքր ինչ ընդարձակօրէն նորա կը նկատեն, որ բավանդակութեան էական մասերը ատենախօսութեանս միջոցին արդէն հաղըսդեւէ եմ. գուրս էի ձեւել խօսքիս մի քանի պահպիս ակնյայտնի ամփափումները, սրմաց եղանակացնելն դժուար չը պէտք է լինէր ունկնդիբների համար, Ա. Ա.

այնպիսի նիւթի վերայ խօսել, որ անշուշտ Չեղ ամենիդ ոգևորում է և որ մեր գործի հիմնաքարը պէտքէ լինի, բայց տարաբախտաբար նորա մասին իշխող գաղափարները գեռ շատ մութ և հակասական են մեր մէջ, Ես այսպէս արտայայտած կլինիմ մի և նոյն ժամանակ իմ բոլոր ձգտումների ծրագիրը մեր պյս ժողովներում, Եմ ընտրած նիւթն է՝ «ազգայնութեան տարրը ուսումնարաններում»:

Սիրելի պաշտօնակիցք, արդեօք զիտե՞նք, թէ մենք ինչին և ինչու ենք ծառայում: — Մեր զաւակները երկու տեսակ ուսումնարաններում են կրթվում՝ պետական և ազգային — հոգևոր, Հարկաւ պետութիւնն իւր որոշ և մերձաւոր նպատակներին լրում տալուն համար է ծախս անում և պէս պէս ուսումնարաններ բանում, նա աչքի առաջ ունի ընդհանուրի օգուտն ու հոգալ, նա չի կարող իւր մասնաւոր հպատակների պէտքը ևս հոգալ, որոնք եմէ իրօք մի այդպիսի պէտք ունին և եթէ այն հակառակ չէ պետական խորհրդին, անշուշտ ինքեանք ևս պէտքէ հոգան իւրեանց համար: Եւ մենք անշուշտ խորին սրտով մեր երախտագիտութիւնը պէտքէ յայտնենք մեր բարեխնամ տէրութեան, որ մեզ մեծ շնորհ.ք է արել մինչև անգամ և ոյն հանգամանքով, որ մեր հոգեօրական գասին իրաւունք է տուել հոգևոր գպրոցներ բանալու մեր ազգային պիտոյից լրում տալու համար: Այսպանով էլ նա գրեթէ մեզ պատուիրումէ, եմէ պէտք ունիք՝ բացէք, բայց և հոգացէք պահպանութեան համար: Արդ՝ մեղ վերայ է մնում ամօթն ու խայտառակութիւնը, եթէ չ'կարողանանք պահպանել: — Այսպէս մենք տեսնումենք, որ իրականութեան մէջ Զ տեսակ ուսումնարաններ գոյութիւն ունին, երկուսն էլ օրինաւոր են, երկուսն էլ ծնողների ազատ ընտրութեան թողած, Եւ, յարգելի հանդիսականք, եմէ ծնողն իւր զաւակին այս կամայն ուսումնարանին է յանձնում կրթուելու, նա գործում է զիտակցութեամբ և ընտրութեամբ: Եւ ուրեմն մենք, որ ազգային ուսումնարաններին ենք ծառայում, իրաւունք չունինք շեղուելու մեր սահմանից և ուրիշ սահմանի մէջ մտնելու: մենք ոչ թէ միայն անուամբ, այլ և իրօք իրբե ազգային — հոգեօր ուսումնարան պէտքէ պահենք մեզ հաւատացած ուսումնարանը, Ո՞քան վսեմ է մեր գործը և ծանր է մեր պատասխանատուութիւնը: Ծնողների յոյսը, նոցա որդոց ազագան, հասարակութեան ակնկալութիւնը, այս և պետութեան բարութիւնն ու հաւատարմութիւնը մեզ է շնորհած և յանձնած: Բայց արդեօք պարզէլ ենք մեզ համար: թէ ի՞նչպէս ենք ուղում կատարել մեր պյս պաշտօնը և դոցա ամենին ու մեր խղճին համար ու հաշիւ տալ:

Եյս հարցին գտուար չէ պատասխանել, եթէ մի վայրկեան խորհենք, թէ ի՞նչն է ստիպում հայոց ուսուցչին հայոց ուսուցիչ լինելու, ի՞նչն է ստիպում նորան այնքան պատասխանատուութիւն յանձն առնելու: Միթէ պատիւը, միթէ վարձատրութիւնը գրաւում է նորան այդ պաշտօնի մէջ, ոչ յայտնի է: որ ոչ մէկ ուրիշ վիճակ այնպէս անպատիւ

չեւ, այնպէս անապահով չեւ, թէ բարոյապէս և թէ նիւթապէս, ինչպէս թափառական Հայոց ուսուցչի աստանգական կեանքը Հայոց ո՞ր ուսուցիչը իրաւունք չունինախանձելով նայելիւր ընկերակիցների վիճակի վերայ, որոնք գործունէութեան մի այլ անպարեզ են ընտրել, քան ինքը բայց ինչո՞ւ ինքը այսքան աննախանձ ձանապարհ է ընտրել. մի՞թէ ամենքն էլ այնքան անընդունակ են իրեանց ընկերների գասի մէջ մնալու և նոցա շաւզով աւելի պատուաւօր ու ապահով ասպարիզի մէջ մտնելու. — Աչ, նորան ոկեորում է մի բարձր գաղափար, որ նորա բնտրած շաւզի աստղն է գառել, որի մէջն է տեսնում իւր թէ պատիւը և թէ վարձատրութիւնը. որ եթէ մի պահ մոռանում է իւր մարդկային թուլութեամբ, միւս պահին աւելի եռանդով ապաշխարում է իւր բարպարական ուրացութիւնը. Եւ իւր զրօշը — այս այս է.

Ճշմարիտ Հայոց ուսուցիչը՝ ազգայնութեան ծառայելով համոզուած է, թէ քաղաքակրթութեան է ծառայում, ձնողներին միմթարութիւնն է պատրաստում, զաւակներին — մարդավայել ապագայ, հասարակութեան — ընտիր անգամներ, պետութեան բարի քաղաքացիներ, և վերջ ամենայնի ազգին ու եկեղեցուն հարազատ որդիք է տալիս. Բայց եթէ նա այսպիսի համոզմամբ է ձեռնարկում իւր սուրբ գործը, արդեօք չի յափշտակվում. զուցէ միայն ցնորում կամ մոլորվումէ, իւր երազական մտքերով: Կ՞ոչ երաշխաւորութիւն ունինք, թէ հագեբանորէն աղգայնութիւնն իրօք այնքան բարիք կարող է առաջացնել: Մեր ինզրի էական և ընդարձակագոյն*) մասն առև կտորի բացատրութիւնը պետք լինի, որի ճշմարտութիւնը ամենայն ուսուցչի զգացմունք է գառել, զուցէ և պայծառ ըմբռանցւմ:

Բայց ես շատ գժուարանումեմ խօսքս արձակ կերպով շարունակել, մինչեւ որ ամենային պարզութեամբ մի տարակուսանք չփարատեմ: Յարգելի հանգիստականք, խոստովաններ, թէ ազգայնութիւն բառը բաւական գայթաղղեցուցիչ բառ է: Գա լսվումէ աւելի գործերում և թերթերում: իսկ մանկավարժութեան մէջ աւելի գործածական է «մայրենի լիզու» խօսքը մեր ասած «ազգայնութիւն» զաղափարի բացատրութեան համար: Բայց ես շատ ովէտքէ աշխատեմցոյց տալու թէ այդ խօսքը նեղ է այն զաղափարի համար, կամ թէ այդ խօսքը հարկաւոր է աւելի ընդարձակ իմաստով ըմբռնել: Կոկ կանխաւ մի քաղցր պարտք կը կատարեմ և Զեր ամենի զգացմանց թարգման կը կանգնեմ, աւելացնելով, թէ մենք պատասխանական չենք բառացնում մեր ուսումնաբաններում, և պարծենալով կամեմ, թէ մինչեւ այս որ Հայոց քը մէկ ուսումնաբան չէ ամբաստանուել այդ հանգամանքով, և հաւատումենիք, թէ չի էլ ամբաստանուի ապագայում: Մեր զործը

(*) Պ. Կախականին այնպէս թաւեցաւ, իբր թէ մենք առենանուածեան բուն իւրագործ շելուեցանք:

իսաղաղ քաղաքակրթութեան գործ է, և ուրեմն մեր խիզճը անարատ է։ Մենք այս անկեղծ խոստավանութիւնը պէտքէ անէինք, որպէս զի ամենապարզ լեցուով խօսենք ազգայնութեան մասին, այսինքն թէ ազգային կրթութեամբ ուզում ենք ճշմարիտ մարդավայել կրթութեան հոգսերի լրումտալ եւ իրօք՝ այն մանկավարժը շատ կոյր մանկավարժ է, եթէ ուսումնարանի սրբավայրը գործ է գնում իւր կարձամիտ շտապով ձուլած գաղափարները սերտել տալու և պատուաստելու անմեղ մանկանց մոքի մէջ։ Մանկավարժութիւնը խստիւ մերժումէ կարծեցեալ բարձր նպատակները կամ նոյն իսկ իրական բարձր նպատակները մերենայօրէն պատուաստել ուրիշի մոքում։

Անշուշտ ամենայն մարդ բարձր նպատակներին պէտքէ զիմէ, բայց այդ կարող է անել միայն իւր ներքին զգացմանց գրգմամբ, ուրեմն Ս. Հոգու ներշնչմամբ, և ոչ թէ մերենայօրէն սերտած և ուրիշի խելքով ստացած։ Մեծ նպատակներ սահմանելը մի ուրիշ վտանգի ևս կը հանդիպի. ո՞ր ուսուցիչը երաշխաւոր կարող է լինել, թէ նորա աշակերտը վաղը իրանից բարձր նպատակներ չի ունենայ. և ի՞նչ կլինէր մարդկութեան վիճակը, եթէ ամենայն նոր սերունդ իւր նախորդ սերնդի նպատակներից բարձր չը դիմէր։ Դժուար չէ համոզուել, թէ մանկավարժութեան հոգուն այն չի կարող լինել, որ մեծ նպատակներ ուսուցանէ, այլ այն՝ որ մեծ նպատակների ընդունարաններ պատրաստէ. այս օրուայ մանուկը այսպիսով վաղը ինքը կը ծրագրէ իւր նպատակն ու շափշը, որ մեզ համար գեռ հասանելի չէ։ Հանձարեղ մարդիկ այսպէս են նպաստել քաղաքակրթութեան. կենդանի սերունդը ինքնարերաբար պիտի գործէ։

Յարգելի Ժողովականք, մեզ մնումէ այժմ բացարել, թէ ի՞նչպէս են պատրաստվում ս. Հոգու ներշնչութեան ընդունակները, որով մենք կը մերձենանք այն հարցին, թէ ազգայնութիւնը մեզ համար իրք միմիայն մանկավարժական տարր է և ոչ թէ քաղաքական խթան, — բայց ի հարկէ հարկաւորութիւն չեմ ունենալ Զեր առաջ երկարաբանելու,

— Մանուկն ունի ներքին կենդանական պէտքեր, նա քաղցում է, հանգիստ կամ շարժուել է ուզում, և նա շարժվում է նախ կուրօրէն, աննըսպատակ, և միմիայն իւր Ներքին ներգային գրդմամբ։ Այսպէս պատահար սորա ձեռքն է ընկնում այն, ինչ որ նորա քաղցը յագեցնել կարող է. Այնուհետև շարժու մները սովորած և նպատակաւոր են դառնում, թէ և կարծես առանց զիտակցութեան, այլ, ինչպէս ասումեն, բնազդական։ Բացի այս՝ մանուկը ձնումէ զգայարանքներով, — բայց տպաւորութիւններ է ստանում. եթէ դոքա հաճելի են — շարունակում է ձգտել այդ տպաւորութիւնները պահպանելու համար, իսկ եթէ անհաճոյ են — խորշում է նոցանից։ Այսպանով նա գեռ ևս անասուն կենդանի է, և ամենայն կենդանի նոյնն է անում։

Բայց նա ունի յիշողութիւն, նա փորձեր է հաւաքում, սկսում է կանխագիտութեամբ գործել, այսինքն ոչ թէ բոպէական ազգեցութիւն-

ներով, այլ անցած գնացած ազդեցութեանց ուժերով, — և նա ուրեմն մի աստիճան բարձրացել է, թէե գարձեալ գեռ ևս կենդանի անասուն է և չէ թէ մարդկային հանձար:

Նա այսպէս պատրաստէ ոչ միայն իւր՝ այլ և ուրիշի՝ փորձերից էլ օգուտ քաղել, իւրն ուրիշին հաղորդել, իւր մտաւոր աչքն աւելի բաց պայմել, — բայց այդպիսի հաղորդակցութեան համար գործիք չունի. Երբ-որ նա խօսել է սկսում, նա արդէն մարդ է, և ոչ միայն կենդանի. Մինչև որ լեզու չունենայ, նա վերացական գաղափար ևս չի ունենայ, նորա մտքերը չեն խոտանայ, բարդ զուգորդութիւն չեն ստանայ, իսկ նորա բարոյական և գեղասիրական գաղափարները շատ կոշտ ու կոպիտ կլինին, և եղուն է՝ որ մի ձայնական տպաւորութեամբ կարողանումէ մտքի ամբողջ շաղկապած շղթաները զարթեցնել, նորանով են դառնում հոգիները հաղորդակից, նորանով մարդ կենդանական միանձնականութիւնից հանվումէ, «Եսը» ընկերութեան անդամ է դառնում:

Ամենայն մարդ այն լեզուով է այս աստիճանին հասնում, ինչ լեզու որ նախ բարբառել է, այդ լեզուն նորոգ ստեղծել *) է նորան այլ աշխարհ-քում, ուստի և մայրէնի է, Աւրեմն հայախօս Հայի մայրենի լեզուն հայ-երէնն է, վիրախօս Հայինը — վրացերէնն է, Արխանգելի մէջ ձնած ուստախօս Հայինը — ուստահերէնն է, ի հարկէ ենթադրելով որ դորա օրօրոցից արդէն այդ լեզուներով են բարբառել:

Դուք տեսնումէք, թէ ինչու մայրենի լեզուի խնամքը մանկավարժութեան մեջ առաջին պահանջ է համարվում. բայց և մի ներքին ազդմամբ Զեր սիրտը պէտքէ խոռովիր, երբ լսեցիք, թէ Հայի մայրենի լեզուն կարող է լինել ոչ միայն հայերէնը, այլ պատահաբարնաև վրացերէնը կամ ուստահերէնը. և, յարգելի ժողովականք, Զեր ներքին ազդը Զեր չի խափում, նա հիմք ունի. Ահա այս էր պատճառը, որ սկզբից զգուշացրեցի «մայրենի լեզու» խօսքի անպատեհ գործածութիւնը մանկավարժութեան մէջ.

Մենք հասանք այն կէտին, ուր պարզապէս մի պատասխան պէտք գտնենք, թէ արդեօք մանկավարժութեանը սկզբնական կրթութեան համար իրօք մայրենի լեզուի խնամելն է շեշտում, թէ մի ուրիշ հանգամանք. Դժուար չէ տեսնել, թէ մայրենի լեզուով իսկապէս աղինունքն է ուզում խնամել, և մանկավարժութեան խսկական հոգսը ոչ թէ դատարկ հնչիւններն են (ձայնական լեզուն), այլ այդ հնչիւններով հաղորդած իմաստները, որոնք զանազան ազգերի մէջ նոցա աշխարհա-

(*) Երբար մի լուս ո լուսը հնի է կոչվում. նա այդ անունն սուսանում է պաշտամական կերպավէ Յայս աւնինք, որ մեր նկարադրած հոգերանական պայմանները ոն-քիշդ յեն կարող համորուիլ, մոնաւանդ քանի որ ձայնական լեզուի և նորա մէջ ամփափած իմաստների յարաբերութիւնը գեռ չհնիք քննէլ:

Հայեցողութեան համեմատ զանազան գոյն ու կերպ են ստանում։ Դժուար չէ նմանապէս այն էլ տեսնել, թէ ինչու մանկավարժութիւնը մի բառ ուրիշ բառի տեղ կամ աւելի ընդարձակ մտքով է գործ ածում։ Փրանսիացին, Անգլիացին, Գերմանացին, Ռուսը իւրեանց մայրենի լեզուն սովորելով, անշուշտ իւրեանց ազգային տարերքի սնունդ ևս ստանումեն. բայց Հայն—ոչ միշտ, քանի որ մի տեղ հայերէն, միւս տեղ տաճկերէն, երրորդ տեղ վրացերէն լեզուն է սեպհականել իւրեան իրեւ մայրենի լեզու. Մի՞թէ այժմ պարզ չէ, թէ « մայրենի լեզու » շփոթ գաղափար է մանկավարժութեան մէջ. և մի՞թէ գարձեալ պէտքէ պնդուի, ինչպէս որ սովորութիւն է եղած, թէ հայն իւր անհատ-պատմական մայրենի լեզուով պէտքէ կրթուի, այսինքն իւր առաջին բարբառած, օրօրոցի լեզուով։ Պուր առաջուց կարող էք գուշակել, թէ այս զրութիւնից ինչ անհեթեթութիւն կարող է առաջանալ մանկավարժութեան համար, իմկ այս բացատրելու համար միայն մի օրինակ բերենք։

Մի թեթև ակնարկ ձգենք, թէ ինչպէս վերջին հայախօսը Արաստանի մէջ վիրախօս է դառել, կամ Աեհաստանի մէջ լեհերէն է սկսել բարբառել—նա քանի որ չէր գաղթել այդ երկիրները՝ միայն հայերէնով էր կարողանում հաղորդակցել իւր շրջապատողների հետ. ամենայն զիւրութեամբ ինքը նոցա էր հասկանում, նոքա—գորան. Բաղտի բերմամբ, նա յանկարծ ստիպվումէ մի ուրիշ աշխարհք գնալ, ուր կարօտութիւն է զգում հացի տեղ « պուրի » ասել, ու մզկով տեղ — « մզկ » , և նա այդ շատ հեշտ է սովորում, որովհետեւ առարկան տեսնելիս՝ ականջով իսկոյն լսումէ շրջապատողներից և անունը, իսկ տեղն ու տեղը ականջով ընտելացածը խոր է տպաւորվում. — Մի միջոց անցնելուց յետոյ՝ նա սկսումէ « պուրի » և « մզկ » այնքան գործածել, որ թէն հաց և ու մզկ դեռ չէ մոռացել, բայց և առանձին կարիք էլ չի զգում գործածութեան համար հրապարակ հանել, այժմ տան մէջ իւր զաւակներից և ամուսնուց էլ « պուրի » , « մզկ » է լսում։ Աերջապէս մի միջոց էլ անցնելուց յետոյ՝ արգէն բոլորովին մոռանումէ հաց ու ու մզկը որովհետեւ հայերէն չը խօսելը արգէն բաւական տեսց. Յայտնի է, որ յիշողութիւնն էլ սահման ունի, եթէ նորա մէջ ամբարածը երկար ժամանակ ժանգուած է մնում, ինչպէս որ մեր նկարագրած զէպքումը Եւ ահա մեր հայն կատարեալ իշխութեան դառաւ։

Բայց միթէ իրօք իշխութեան . . . նա վիրախօս դառաւ. Էլ տարակոյս չը կայ, բայց թէ նորա վիրախօսութիւնը որքան կոշտ ու կոպիտ բարբառ է, ապացոյց այս բանին այն լինի, թէ ինչպէս Արացիք խորշելով նորանից՝ մինչեւ անգամ կատակ են անում նորա վերայ, արհամարհութեամբ չե ու միտք անուանելով, ինչպէս որ մի տգէտ երեմն Հրէային անարգութեամբ ջնուր է անուանում։ Այդ հայն այժմ մի թշուառ էակ է. նա, որ երբեմն մի կատարեալ լեզու ունէր և նորանով իւր ներբին աշխարհահայեցութիւնը կատարեալ կերպով ժայ-

տարարումէք, այժմ կորցրել է և այնպիսի լեզու է սկսել դործ գնել, որ իւր մտքերի կատարեալ թարգման չի դառնում. նա եթէ համը չէ, կատարեալ խօսուն մարդ ևս չէ: — Քաղբատիոններ, Օրբելեաններ, Սումբատովներ, խօսք չկայ, արգեն կատարեալ Արացի են դառել, իսկ Թելաւի Հայերը, Գորու Հայերը այս ափից դուրս են եկել և զես պյա ափը չեն հասել. քանի որ սորա Հայութ Գրեշունն են յիշում, սորա զես Արացիք չեն ազգով թէն Հայոց լեզուն արգեն կորցրել են:

Այ ի՞նչ է պահպանում սոցա, որ լեզուն կորցնելով՝ զես էլի Հայ են մեռում: Պ. պ. սորա բնիկ վրացիների պէս ունեն «մղէ» են ասում, և կարծես, թէ այդ երկու գործածութեան մէջ բնաւ տարրերութիւն չկայ: Բայց ի հարկէ Զեղ չպիտի զարմացնեմ, եթէ աւելացնեմ, թէ նզյն այդ վրացի հնչիւնով Հայն ու Արացին միայն մի գաղ լայնութեամբ այն ճաճանչաւոր հրեղէն սկաւառակը չեն պատկերացնում, որ նոցա լոյս ու ջերմութիւն է տալիս, այլ Հայն մտածումէ հոյն ունենալի, Արացին Հայութ ունենալի: Եւ հասկանալի է թէ ինչո՞ւ այս այսպէս է: Հայն երրոր վրաստան գաղթեց՝ իւր հետ գաղթեցրեց և իւր բոլոր աւանդութիւնները, իւր մտքի պաշարը, իւր հոգու Հայեացքները, իւր ներքին աշխարհը, իւր բառերի որոշ իմաստը: Նորա գաղափարով արեգակը ունենալի է, որ երկնքի բայց եւս պէս երեւումէ, չըն նստած է Քրիստոս (իսկ առաջ գուցէ Արամազդը կամ ուրիշ աստուածութիւնը), որ արդարների և մեղաւորների գատաստան է կտրում: Նորա գաղափարով ամենայն մարդ մի մի արեւունի. +* արեւ սկանայ, արեգ վկայ: — սորա այնպիսի օճեր են, որ ընտանի են միայն մեր ականջին. բայց փորձենք ուրիշ լեզուով բառացի թարգմանել և իսկոյն կը նկատենք նոցա խորթութիւնը, և ուրիմն նորա ընտանի են միայն մեր գաղափարներին, մեր Հայեացքներին, մեր ներքին աշխարհին:

Ահա, յարգելի ժողովականներ, այդ գաղափարի, այդ Հայեացքի, այդ աշխարհի յայտարարը ոչ թէ «մղէ» ձայնական հնչիւնն է, այլ ունենալի բառը: Զարմանալի բան է, բայց Հայի «մտքին Հայ հնչիւն է Հարկաւոր և ոչ վրացերէն հնչիւն» եթէ Հայն «մղէ» է ասում: Հաւատացած եղէք որ հետը մտածումէ իւր ունենալի իմաստը և ոչ թէ Արացու «մղէի» իմաստը: Այս մի օրինակով տեսնենք: թէ լեզուն ինչպիսի գաղտնիքներ է ամիսիում իւր մէջ. թշուառ վիրախօս Հայն կարծում է, թէ ճիշտ է յայտնում իւր միտքը, երբ ինքն ուրիշ բան է հասկանում: Լեզուների ծագումը բարելական խառնակութիւն առաջացրեց: և այս ճիշտ է բառացի մտքով: Օտար լեզուով խօսողը, նաև շատ սերունդներ անցնելուց յետոյ, միտքը և խօսքը շփոթումէ: որով հետպհետէ իւր միտքը թաղուած է թողնում և աղքատացնում է: Միաբը կ'արթնի և իւր ժանգերից կ'աղատուի այն ժամանակ, երբոր իւր բուն յայտարարը, իւր անօթը ճեռք կ'առնի. վիրախօս Հայն այն ժամանակ արթուն և հարուստ միտք կու-

նենայ, երբոր Հայոց ազգութեան բուն Հայոց լեզուն էլ գործ կը դնէ: Խսկ ի՞նչ է մանկավարժութեան գործը, եթէ ոչ մտքին արթնութիւն և կորովութիւն տալը:

Եթէ մանկավարժութեան մէջ մայրենի լեզուն մեծ դեր է խաղում, մենք տեսանք, թէ խսկապէս նա մի գործիք է ուրիշ նպատակի համար լեզուն ազգային առանձնայատկութեանց խնամելուն պէտք է ծառայէ: Բայց որովհետեւ ան-ու-ու-ու-ին մայրենի (օրօրոցի) լեզուն միշտ այդ նպատակին չի նպաստում, այդպիսի գէպքերում հարկաւ այլ լեզու պէտք է ընտրուի, այն ևս ուստանին — ուիշ-իշ-իշ-իշ-իշ-իշ կամ ուիշ-իշ-իշ լեզուն: Այստեղ մանկավարժութիւնը չի տատանուի և լեզուն կը փոխէ: որ իւր գործն էլ արգիւնաւոր և հաստատ կերպով առաջ տանի:

Մանկավարժութիւնը խորհրդաւոր է համարում ազգայնութեան տարրի մացնելն ուսումնարանի մէջ, այս հաստատ է բայց ի՞նչ է այդ ուիշ-իշ-իշ-իշ-իշ-իշ: Ի՞նչ նշաններով է ճանաչվում դա: Սովորաբար օրօրոցի լեզուն է համարվում ազգայնութեան արտայայտիչ բայց մենք տեսանք, թէ կրթեմն նա այդ պաշտօնը չի կատարում: Հապա ի՞նչ երաշխաւորութիւն ունինք: Թէ մարդ իւր պատմական կեանքը փոխելով՝ լեզուի հետ իւր ազգայնութիւնն էլ յաւիտեանս չէ կորցրել: Ի՞նչպէս կարող է մանկավարժութիւնն ազգայնութիւն խնամել: Քանի որ ազգայնութեան ինչ լինելը այսպէս շիռթ և տարակուսելի հանգամանը է դունում:

Այս հարցը միայն մեզ համար նոր չէ: պարբերաբար նոր ուժով և աւելի հանձարեղ մարդկանց շնորհիւ վերստին հետում է դա քաղաքակիրթ ազգերի ականջին: Հենց այս տարի, մարտ ամսին, հռչակաւոր Թենանը Սորբոնի մէջ այդ խնդիրը նորոգեց, և այնուհետեւ նորա խօսքերն ամբողջ աշխարհը տարածուեցան:

Նորա ասելով՝ ազգութիւն են կազմում միայն Փրանսիայի, Անգլիայի, Գերմանիայի մեծահանձար ժողովուրդների պէս մարդկանց միաբանութիւնները, որոնք բարդապէս ի մի ձուլուած՝ այդ միաւթեան լիակատար գիտակցութիւնն ունին: Մինչև որ այդ գիտակցութիւնը մի ոյժ է յայտնում անհատական զօհաբերութիւններով ընդհանուրի օգտի համար, — մարդկանց այն միութիւնն իրաւունք ունի ազդ կոչուելու և կեանք վայելելու: Այս սկզբունքով ազգ չէ Աւստրիան, թէ պետութիւն է ազդ է Խտայիան, թէ անդագար յազմվութէր և երկար ժամանակ պետութիւն գառնալու յաջողութիւն չէր ստանում: և ազգ չէ Տաճկաստանը, թէ ընդհակառակն անդագար յաղթում, մեծանում, ընդարձակվում էր, բայց իւր մասերի մէջ անխղելի կապեր հաստատել չէր կարողանում, չէր էլ ձգտում:

Եթէ մարդկանց միաւորութիւնները երբեմն ազգութիւն են գառնում, խսկ երբեմն միայն արտաքին կապերով ամրողջութիւն են կազմում: — երեի մի նշան կայ, որով նորա այսպէս կամ այնպէս են ճանաչվում: արգեօք արիւնով, ցեղով, լեզուով, կրօնով, շահերի հան-

րութեամբ կամ աշխարհագրական դիրքով այդպիսի նշան չէ՝ երկում։ Ունանը հաւատացնումէ, թէ դոցանից և ոչ մէկը այն հոգեկան միութիւնը չի կարող հաստատել, ինչ որ նա ինը ագգութիւն է անուանում։ որովհետեւ, ասումէ նա, ամենայն ազգի մէջ արիւնը խառնուած է, լեզուն ձուլուած ու հիւսուած է, կամ բազմալեզուութիւն և բազմակրօնութիւն է տիրում։ այնպիսի շահեր կարող են լինել, որ զօրութիւն կունենան նաև այլազգիներին միացնել։ աշխարհագրական դիրքն էլ միայն այնքան ընդարձակութիւն կարող է ունենալ, որքան որ մարդկանց մէջ յօժարութիւն կայ միասին և մի հոգով ապրելու։ մնումէ միայն մի հանգամանք, որով միութիւն, ազգութիւն է կազմվում — այն է՝ միմիայն մարդու գիտակցական կամքը։

Որչափ հանձարեղ յափշտակութեամբ խօսեց Ունանը միմիայն իւր մեծ ազգը ի նկատի ունելով, այնքան պարզ և հանգիստ կերպով հերքեց նորան նորանից ոչ նուազ մեծանուն Բիգոն՝ յանուն և մեծ և փոքր ազգութիւնների։

Մենք դոցա վիճարանութիւններին մի առ մի չենք հետեւի, այլ դոցա միջնորդութեամբ ուղղակի կը դառնանք մեր ազգութեան հանգամանքներին, որպէս զի տեսնենք, թէ արդեօք հայութիւնը մի ազգութիւն է կազմում, արդեօք ինչո՞վ է երկում նորա ազգութիւն լինելը, և արդեօք ունի՞նա այնպիսի տարերք իւր մէջ ամփոփած, որոնց անխնամ թողնելը կրթութեան մէջ — մահացու մեղք պէտք է համարուի, նաևս սկսենք արիւնից, ցեղից։ և տեսնենք, թէ արդեօք Հայոց արիւնը մաքո՞ւր է մեացել, և կայ արդեօք կենդանաբանական մաքով Հայոց անխառն մաքուր ցեղ, պատասխանը ի հարկէ կլինի — ոչ Յիշեցէք մեր ընտիր տոհմերը՝ Մամիկոնեաններին, Բագրատունիներին։ Դուք չեք ուրանայ նոցա հայութիւնը, անկեղծ ու անձնանուէր հայութիւնը, բայց և այնպէս նորա արիւնով ճեն և Հրէայ էին։ Իսկ այժմ Յիշեցէք Քեհրուտեաններին, Լազարեաններին և Լորու Մելիքեաններին, տեսէք, թէ ինչպէս դոքա իւրեանց միտքը, հանձարը, անձն ու արիւնը Ուուսաստանին են նուիրում։ դոքա կատարեալ Ուուս ևն Ունանի մըտքով, և Ուուսաստանն էլ իւրաքանչիւրին ըստ արժանեաց վարձատրեց՝ խոստովանելով դոցա անձնուէր եռանդն ու ծառայութիւնը, — բայց և այնպէս դոքա ցեղով, արիւնով Հայ են, և այնքան Հայ, որ մինչեւ անգամ ինքեանք Ուսները դոցա կոչել են կառատեղ ։ ներ կամ նաև փոքր Հայեր — յաշկա վերջաւորութեամբ, երեի ուղեցել են ասել, թէ Հայերից էւ ու էւ քննէր կարող են ծնուել։ Մենք պարծենումէնք, որ մեր ցեղը, արիւնը կարողանումէ Ուուսաստանին այդպիսի մեծ մարդիկ տալ։

Այժմ միատեղ շարեցէք Մշեցի մշակին, Պոլսի վաճառականին, Թիֆլիսի շինովնիկին, Մաճառստանի մագնատին — միթէ դոցա մէջ որ և է նմանութիւն և հանրութիւն կայ։ Այո՛, անշուշտ կայ, այդ դոցա ցեղն ու արիւնն է, որը որ եթէ երբեմն իրանք իրենց մէջ չեն ճանաշում։

միւս ազգութիւնները սուր աչքով տեսնում են և իւրեանցից դոցա զատում և ջոկում են, ասելով, թէ դուք մերը չեք, դուք Հայ եք, Ուրեմն եթէ անխառն Հայու ցեղ, անխառն Հայու արիւն չը կայ, անշուշտ կայ մի Հայու մի ցեղ, որ հետզիւտէ ժամանակով մշակուել, ձույուել, դրոշմուել է, որ կոչվումէ Հայկական արիւն և զատվումէ ուրիշ այսպիսի քաղաքակրթուած արիւններից, Այսպէս է և ֆրանսիացին, Ռուսը, Ետալացին:

Քալով լեզուի՝ ուղղակի ուրիշ ազգութեան օրինակով խօսենք, Արդեօք Զօւթցարիան ազգութիւն է, թէ ոչ, Քուք գիտէք, թէ ինչ ամուր ազգութիւն է զա, բայց և այնպէս Յ կամ մինչև անգամ կ լեզուով է բաժանուած, Նեղուն միութիւն չի կազմում այդ տեղ, թէև միջի մարդիկ բախտաւոր են իւրեանց միութեամբ, Հայերս Յ -ի ենք բաժանուած, — Պարսկաստանի, Տաճկաստանի և Ռուսաստանի, այսինքն այլ լեզու խօսող տէրէրի հպատակներ ենք, Բայց մի՞թէ Ռուսաստանցի Հայն կուղենայ Պարսկաստանցի լինելու, կամ Տաճկաստանցի Հայն — Ռուսաստանցի, Տաճկաստանցին Բերլինի աւագաժողովում երգուելով երդում էր, թէ Տաճկաստանցից բաժանուել չի ուզում, նա միայն ինքնավարութիւն էր ինը զրում՝ ցանկալով անխախտ կապուած մնալ Տաճկի հետ, որ իւր լեզուն չի խօսում, Այս մի զարմանալի, բայց և այնպէս պատմական իրողութիւն է, որ Հայն հաշտվումէ քաղաքականապէս պյն ազգի հպատակ լինելու, որ իւր լեզուով չի խօսում, միայն թէ այն ազգը իւր սէրը զրաւէ, Աարդանը նահատակուեցաւ, թէև անկեղծ տիրասիրութիւն պակաս չէր նորա մէջ, Աահանը անձամբ և յօժարութեամբ իւր արքայավայել դրօշակը վեր թողեց միայն այն ժամանակ, երբոր համոզուեցաւ թէ իւր ներքին հայութիւնը կյարգուի, թէ և օտարախօս պետի զրօշի տակ մտաւ, Ուրեմն մարդու մէջ մի աւելի բարձր բան կայ, քան լեզուն, որ միութեան զօրութեամբ է քաշում նորան, այդ — նորա կամքն է, Զանազան լեզուներով էլ կարելի է մի զգացմունք ունենալ, մի միտք փայփայել, միննոյնը սիրել, Մեր պատմութիւնից յայտնի է, թէ եղել է ժամանակ, երբ որ մի աշխարհակալ մեղ մի ուրիշ աշխարհակալից խլել է և մենք չենք ցաւել այդ պատճառվ. բայց շատ է եղել և այնպիսի օրինակներ, երբ մենք մեր արիւնն ենք թափել, եթէ մէկը ուզեցել է մեր տէրից մեզ յափշտակել, Երեակայեցէք ինչ կինի, եթէ Պարսիկը յանդգնի և ուզենայ մեզ իշխելու, Արդեօք մենք պատերազմ կ'երթանք միայն այն պատճառով, որ Ռոսի հպատակ ենք, ուրեմն միայն մեր պարտականութիւնը կատարելու համար, թէ որովհետեւ մենք յօժարութիւն և կամք չունինք Ռուսաստանից բաժանուելու, Ով որ մեր սէրը վայելումէ, անշուշտ նա մեր մէջ լաւ հպատակութիւն կգտնէ:

Բայց մի՞թէ լեզուով չի կազմվում ազգութիւնը, մարդկանց միաւորութիւնը, մի՞թէ նա էլ մի հզօր տարր չէ ազգութեան հաստատութեան

Համար: Յիշեցէք մեր նոր լեզուի և գրականութեան ազգեցութիւնը Հայերի գիտակցութեան վերայ. Երեւակայեցէք այն բարիքները, որ մեզ խոստանումէ Ա. Գրքի աշխարհաբար թարգմանութիւնը, որ Վ. Կափառ Հայրապետը հրամայել է կատար ածելու Միմեանց սիրելու համար հարկաւոր է միմեանց հասկանալ, որ միայն ընդհանուր լեզուով կը լինի. Ամենայն հաղորդակցութիւն մարդկանց մէջ լեզուով է կատարվում. նա իւր մէջ ամփոփում է բոլոր գաղափարները, ուրիշն և ընտանի գաղափարները. Եթէ նա նոյն իսկ միտքը չէ, գոնէ ուղիղ այն ձեւն է, որով որ ձուլուած և գրոշմած է միտքը: Մարդ հեշտութեամբ մտերմանում է մի և նոյն լեզու խօսողի հետ. նոցա մէջ կայ անհերքելի նմանութիւն ես, ուստի և բնականաբար նոցա մէջ հաստատվումէ փոխագարձ համակրութեան զգացմունք:

Այժմ տեսնենք, թէ արգեօք կրօնը կարո՞ղ է հիմք գառնալ ազգութիւն կազմելու համար: Ամենայն ազգ կարող է ցոյց տալ, թէ սկզբում իւր կրօնը շատ սերտ կերպով կսպել է իւր անդամների ազգային միութիւնը. նոքա այն ժամանակ եղել են մի ընտանիք, մի ժողովուրդ — մի գաւանութեամբ: Հայն և Հրեան մի զարմանալի բացառութեամբ մինչև այսօր գրեթէ նոյն վիճակի մէջ են մնացել: Յարգելի ժողովականներ, ի՞նչ ծածկենք, մենք ամենքս մոլեսանդ լուսաւորչականներ ենք: Ազ որ այդ գաւանութիւնը չ'ունի, նորան գժուարանում ենք Հայ անուանելու, մանաւանդ եթէ նա հաւատափոխ է եղել: Հայոց պատմութիւնից էլ յայտնի է, որ Հայերը երբ որ հզօր են եղել, բնաւ հաւատափութեան չեն հարկադրել: Հայութիւնը միսիօնարութիւն չի ճանաչում, որովհետև լուսաւորչականութիւնը միայն Հայու համար յատուկ է համարել: Հայն ատել է իւր մէջ յունադաւանութիւն մըտցընելը, բայց Յոյնին յարգել է նորա կրօնի համար:

Իսկ թէ քրիստոնէական կրօնը ազգային միութեան նեցուկ է եղել, այս երեսումէ և ուրիշ ազգերի պատմական յիշատակարաններից. միթէ իսպանացին իւր ազգութիւնը չը պահպանեց Հագարացիների հետ պատերազմելով: միթէ Քրանսիպի խաչակրութեան շարժումը չօժանդակեց իւր ազգային միութեան հաստատելուն: Այսպէս էլ միթէ մեր Վարդանանց և Աւաչանեան պատերազմները ազգութիւն պահպանելու պատերազմներ չեի՞ն:

Հայութիւն և Լուսաւորչի դաւանութիւն մենք մի ենք համարում, որովհետև գա մեր ազգային յատկութիւն է: բայց թէ ազգութիւնը միայն գաւանութեամբ չի արտայալյատվում՝ բաւական է անուանել Զեր առաջ մի պատկառելի անուն: Մեզանից ո՞վ սրտով, մարմնով և հոգով աւելի հայ է, քան Հ. Ալիշանը. ո՞վ չի խոնարհում իսկոյն իւր գլուխը, այս անունը լսելիս: Եթէ Ճշմարիտ է, թէ Լուսաւորչի դաւանութիւնը հայութեան յատկութիւններից մէկն է, Ալիշանները ցոյց են տալիս, թէ կան ուրիշ յատկութիւններ ես, որոնք եթէ մէկի մէջ

կատարեալ ուժով արթնել են, մենք մռանում ենք և չարութեամբ չենք յիշում նորա պյղքան անհամաձայնութիւնը մեզ հետ. Յարգելիք, մարդու համար թանկ են իւր սիրած ու գգուած գաղափարները, և եթէ Ալիշանի մէջ անարատ պահպանուած ենք տեսնում մեր արմատական գաղափարները, մենք ել չենք յիշում նորա կրօնը, Արդէն Զօն Ստիւարգ Միլլը ասել է, թէ ազգայնական զգացմունքը զանազան պատճառներով կարող է զարթնել, բայց նոցանից ոչ մէկը իւր առանձնակի ուժով ոչ կարող է ծագեցնել նոյն զգացմունքը, ոչ էլ անհրաժեշտ կարեոր է. իւրաքանչիւրը նոցանից կարող է բացակայ լինել, եթէ միւս պատճառները գեռ էլի ներգործում են, Եւ այս մէտքը հարութեանը մեր բոլոր տարերքների քննութեանց ժամանակ:

Հահերի միութեան մասին շատ չենք խօսի. Նա է պահպանում Զուից արիային, Միացեալ նահանգներին, գուցէ և Աւստրիային, իսկ Հայերը իւրեանց շահերի տարբերութիւններով կորուսին իւրեանց անկախութիւնը. ահա այն կէտը, որի մէջ հայերը միշտ թղյլ են գտնուել և Ա-Դ-Դ-Դ էլ Ն-Ն-Ն հ-Հ-Հ օ-Շ-Շ լ-Լ է Հ-Հ-Հ-Է-Է Սակայն այժմ տեսնում ենք, թէ մեր տէրերից ով որ աւելի է պաշտպանում մեր տնտեսական շահերը, նպաստում և օժանդակում է, ով որ աւելի լաւ է ըմբռնել նոցա, մեր միւս մարդկային շահերը, — մեր համակրութիւնը աւելի նորա կողմէն է:

Եղայնութեան տարերքի մէջ պակաս հետաքրքրական չէ աշխարհագրական զիրքը, որով որոշվում է ազգերի սահմաններն. Գետերը մարդկային ցեղերին ճանապարհ են նշանել ընդարձակուելու և տարածուելու համար, լեռնաշղթաները — սահմանափակել են այդպիսի ընթացքը. Մի հայեացք քարտիզի վերայ արգէնցոյց է տալիս, թէ այս կամ այն աշխարհագրական զիրքը հարկաւ մի ամբողջ հայրենիք պէտք է կազմէ. Փոյթ չէ, եթէ Խտալիան շատ երկարացած և նեղ տարածութիւն ունի, այնու ամենայնիւ նա մի ամբողջացած միութիւն է կազմում. երեք կողմերից ծովերով է շրջապատած և հիւսիսից Ալպեան սարերով է ծրագրած. Անդիիան ի բնէ մի միութիւն է կազմում, Գրանսիան որքան որ աշխատեց իւր բնական սահմաններից գուրս գալ, որքան որ ուզեց արհամարհել Պիբենեան և Ալպեան սարերը, այնքան ձախորդութեանց հանդիպեցաւ, Ավկիանն ու Պիբենիան նորա բնական սահմաններն են և այն տեղից նա լաւ ապահոված է. իսկ արևելքից այդպիսի սահման չունենալով՝ նորան վիճակուած է անգաղար պատերազմելու Վերջին անգամ Ալղաս և Լոտարինգիան քաւելով, զեռ ո՞վ գիտէ, թէ այսուհետեւ էլի քանի անգամ նորա անբնական սահմանը առաջ ու յետ պիտի քաշուի՝ զանազան գաշնադրութիւնների ծրագիրներով. Աշխարհագրութիւնը կարծես առաջուց նշանակել է մարդկանց կոիւների զաշտերը, ուր ազգերը ճակատի են տուել և շարունակ կ'ընդհարուին, մինչեւ որ այդպիսի անորոշ գաշտերի բնակչաց ցանկութիւն-

ները և համաձայնութիւնը կճանաչուի իրքեւ միակ հնար վէճը և մըրցութիւնը դադարեցնելու համար:

Այդպիսի կոիւների գաշտ է և Հայոց բնիկ հայրենիքը: Հայաստանը իրաւ որ մի որոշ աշխարհագրական միութիւն է կազմում, բայց ի՞նչպիսի միութիւն: Նա մի լեռնակղզի է, մէջ տեղը ցից բարձրաւանդակ կազմած, որ աշխարհի գեպի ամենայն կողմ գետեր արձակելով՝ հետզհետէ դաշտանում ու ձօրանում է: Եւ ամենայն կողմից մեծ մեծ պիտութիւններով պատաժ լինելով՝ իւր գետերը նոցա ճանապարհ է տուել աւելի և աւելի մեր պատմական հայրենիքը տիրելու: Կոիւն այնուհետեւ նոցա մէջն է բացուել, և մեր բնակութիւնը իւրեանց համար երկպառակութեան խնձոր է եղել: — Բացի այս յիշենք, որ Հայաստանը գլխաւոր ճանապարհներից մէկն է Ասիայի և Եւրոպայի հաղորդակցութեան համար: ազգերի գաղթականութիւնը այդ կամուրջով պէտք է անցնէր և կ'անցնի: Քա մի Զուրիցարիա է, որ եթէ մեծ ազգերը չ'ուզնան որ և է կերպով կոիւներից չեղոքացնել, ինքը յարմարութիւնունի միայն պատերազմի գաշտ լինելու, ինչպէս և անզագար եղել է: Այդ է պատճառը, որ Հայերը՝ մինչև անգամ իւրեանց քաղաքական անկախութեան ժամանակ՝ բոլորովին անկախ չեն եղել և միշտ իրարից բաժանուած են մնացել: մի մասը հակել է գէպ արևելք, միւսը արևմուտք, երրորդը հիւսիս: Կամ նաև մեծ մեծ բազմութիւնները այն տեղից ամենայն կողմ անարգել գաղթել են:

Մեր օրինակով մենք տեսնումենք, թէ շատ կան այնպիսի գործիչներ, որոնք այսպէս կամ այնպէս որոշ ազգայնութիւն են կազմում, ուր երբեմն մէկն է գործում առաւելութեամբ, երբեմն միւսը, երբեմն բոլորը միասին, բայց միշտ այնպէս, որ մէջ տեղը երեսում է ժողովրդեան որոշ կամքը, նորա հոգին: Արգելքներ շատ կան, բայց և պայմաններ էլ շատ կան ազգութեան ձեւնալու համար:

Շատ անգամ այսպիսի միութիւնը կազմվում է անհայտաբեր, Գայիս է մի աշխարհակալ, մի Հայկ կամ մի Աղարշակ, և ժողովրդեան կամքն ու հոգին հասկանալով՝ կարողանում է զրաւել նորա սիրտը, միացնել նորան: Շատ չի անցնում և աշխարհակաները ինքեանք մոռանում են իւրեանց ծագումը և իւրեանց տիրած ժողովրդի բռն ներկայացուցիչն են զառնում: Թէկ Հայկազանց և Արշակունեաց հարլստութիւնները ստար ծագում ունին, բայց այնքան հայանում են, որ բնիկն էլ նոցա ստար չի համարում: Ժողովուրդը սկսում է կառավարուել ոչ թէ միայն պետական ուժով և օրէնքի խստութեամբ, այլ հայրենասիրութեամբ: Խսկ ուր հայրենասիրութիւն կայ, այն տեղ ազգայնութիւնը պատրաստ կազմուել, ձեւացել է:

Եթէ կայ ժամանակ, երբ ազգերը կազմվում են աշխարհակալութեամբ, որոնց գլուխը կանգնում են իշխաններ կամ պետական անձինք, — ուրիշ ժամանակ ազգը ինքն է կազմվում — գիտաբերութեալ: Մարդ-

պանների ժամանակ հայկական պետութիւնը էլ չը կար. Պարսիկներն ու Արարները իւրեանց վարմունքը նորանով սկսեցին, որ ուղեցան բռ-լորովին արհամարհել մեր ազգային առանձնայատկութիւնները, ուղե-ցին արգելքներ դնել մեր բնական շարժման. բայց վերջացրին նորա-նով, որ Վահանի պէսների հետ, կարծես իւրեանց հաւասարների հետ, դաշինք կապեցին, փոխադարձ պայմաններով. Հայն էլի հպատակ մը-նաց, բայց իւր առանձնութիւնը չը քաւեց և հաստատ ճանաչեցնել տուեց. Նա մնաց չը ջնջուած աղդ, թէև հպատակ աղդ:

Ահա երբոր ժողովրդեան մէջ այսպէս սաստիկ բաղձանք է զարթնում՝ ողի մասնաւում, — արդէն նորա ազգայնութիւնը իրեւ երկունք դոյրութիւն ունի, կամ ազգերի շարքերի մէջ մտնելու պատրաստութիւն ունի, թէև քաղաքական քարտիզի վերայ որոշ տեղ սահմանած չ'ունենայ. Այդտեղ ընդհանրական ոգին, կամքի միութիւնը շարժուել է, միով բանիւ — ազգն արդէն ծնուել և լոյս աշխարհ է եկել.

Թէ ինչո՞վ է կատարվում այդպիսի ազգութեանց միաւ որութիւնը, այժմ հեշտ է հասկանալ. ահա այս տեղ են շարժվում այն տարերքների զօրութիւնը, որ Ռենանը առ ոչինչ է սեպում. Այն ամենայն, ինչ որ զանազան գաւառների մարդկանց քարշում է իրար ձգտելու, ինչ որ նո-ցա ընդհանրական բաղձանք է զարթեցնում, ինչ որ զգալի կերպով մատ-նանիշ է անում և ճանաչեցնել է տալիս նոցա իւրեանց միարանու-թեան օգտաւետութիւնը, — այն ամենը նոցա միացնում է, ուրեմն թշուառութիւնն էլ, բախտն էլ ըստ հանգամանաց այդպէս են գործում. իսկ ընդհակառակն, ինչ որ մարդկանց իրարից խորշեցնումէ, այն քակ-տում է նոցա միութիւնը. Հայն ատում էր Պարսկի կրակը, որ կրակա-պաշտութեամբ էր ուղում նորա հետ միանալ.

Այն ազգը, որի մէջ եռանդը թմրել է, գուցէ տաս անգամ նուածուի, ազատուի և գարձեալ հպատակ դառնայ, մի իշխանի ձեռքից միւսի տակ մտնի, բայց և այնպէս այս բոլոր փորձանաց նեղութիւնը չ'զգալով և անվրդով տանելով իւր ճակատագիրը. Խոկ եթէ արթնել է նորա մէջ ազ-գային գիտակցութիւնը, նա առանց ընտրութեան չի փոխի իւր տիրա-պետին, և ինչպէս առաջ էլ ասացինք՝ մինչեւ անգամ մեծամեծ բռնու-թեանց և տանջանաց տակն էլ ընդհանուր ոգի կարող է զարթնել նորա մէջ, եթէ պայմանները գեռ ներգործում են:

Ինչպէս ազգութիւնը կազմվում է, այնպէս էլ քանդվում է. Նա շատ թշնամիներ ունի, ինչպէս և շատ օժանդակիչ տարերք. Աեանքն անգա-գար աճում և քայքայվում է. Ազգութիւնն էլ մի գործարանաւոր կեանք լինելով՝ մի և նոյն օրէնքներն ունի. Մինչեւ որ մի երկրի պայ-մաններն այնպէս են կազմուած, որ նորա մարդկանց միացնում են, մինչեւ որ այդպիսի պայմանները ուրիշ խորշեցնող պայմաններից գե-րակշում են, — փոխադարձ համաձայնութիւնը պնդանում և շարու-նակվում է, ժողովուրդն աճում և կազմուրվում է. Մի մեծ հասա-

բակական մարմին միշտ կը քայլքպուի, եթէ նորա բարոյական կապը, համերաշխութիւնը, ներքին միութիւնը թոյլ է. Ի՞նչ օգուտ արտաքին քաղաքական միութիւնից, եթէ բարոյական կապը թուլացել է. եթէ մարդիկ ճգնում են մի լեզուվի խօսել, բայց չեն կարողանում իրարդաղափարները հասկանալ և մարսել, եթէ հայրենական հաստատութիւնները մէկին ձեռնատու են, միւսին ատելի, եթէ ինչ որ մէկին տիրեցնում է՝ միւսին այն ուրախացնում է, — կարող է այսպիսի հանգամանքներում միութիւնը անվնաս մնալ. Մարդ իւր գաղափարներից հեշտ չի ուրանում, բայց զգացմունքները հեշտ է փոխում. — Այս բոլորն ասելով՝ այնպէս չպէտք է հասկանալ, իբր թէ կեանքի մէջ մրցութիւն, կուսակցական մաքառումն, մոքի տարրերութիւն չը պէտք է լինին. այն ժամանակ այն կեանքը մեռելութիւն կլինէր, Բայց հանգամանքները մարդկանց խսպառ չը պէտք է բաժանեն և իրարից խորշեցնեն. Հայրենաց սէրը, ընդհանուր յիշատակների քաղցրութիւնը, ընդհանուր ցաւակցութիւններն ու ուրախակցութիւնները գեռ այնքան վառ պէտք է լինին նոցա սրտերի մէջ, որ ամենայն վէճից յետոյ՝ հաշտուելու տեղիք էլ ունենան. Ուրեմն մրցմամբ չի քանդուի միութեան կապը, այլ ատելութեամբ, թշնամութեամբ, եթէ ուրիշի զգացումը արհամարհչվում է, — այն տեղ ընականապէս առաջ է գալիս և՝ ատելութիւն և՝ թշնամութիւն.

Ազգութեան միւս վտանգն է — համաքաղաքականութիւնը. Մեծագոյն միութիւնը սիրել և մերձաւոր փոքրագոյնը արհամարհչել — մի անքնական զգացմունք է, թէ և պատմական իրողութիւններով, կարծես, այս գաղափարը հերքվում է. Եւ իրաւ միայն հին աշխարհքում « օտարական » և « թշնամի » նոյն և մի էր համարվում, արիւնակցութիւնից զրսի մարդը էլ ընկեր չէր համարվում. Այնուհետեւ Յունաց փիլիսոփայութիւնը թուլացրեց այդպիսի հայրենասիրութիւնը. Յետոյ քրիստոնէութիւնը կատարեալ մարդասիրութիւն և ընկերասիրութիւն քարոզեց. Աերջապէս գիտութեանց ընդհանրանալը — մինչև անգամ ժողովրդեան ստորին դասերում — աւելի միութիւն հաստատեց մարդկանց մէջ. Այնպէս որ այժմ իբր թէ մարդը էլ Փրանսիացի, Անգլիացի, Գերմանացի, Ռուս չէ, այլ նա սոսկ մարդ է, տիեզերքի քաղաքացի է. ապա ուրիմն իբր թէ հերքվում է հայրենասիրութեան, ազգասիրութեան, ընտանեսիրութեան գաղափարը, իբր թէ ազգութիւնը մարդկայնութեան գաղափարի առաջ մի նեղ, սնոտի գաղափար և անարդ բարբարոսական պՃնասիրութիւն է:

Բայց ո՞րքան սովիետութիւն կայ այդ սկզբունքների մէջ, և ինչպէս նա կարող է շատերին խարել իւր արտաքին փայլով. այնպէս որ սոցա համար համաքաղաքացի լինելը շատ գրաւիչ և իրագործելի բան կ'երևայ. Սակայն եթէ իրաւ է, թէ քրիստոնէութիւնն ազգասիրութիւնը խորտակեց, միթէ պէտք է մոռանալ, որ նա խորտակեց չին ազգասի-

րութեան գաղափարը, ուր « այլ մարդ » և « թշնամի » մի էր համարվում։ Քանի քրիստոնէութիւնը տարածուեցաւ և մարդկութիւնը եղայրսիրութեան ընտելացաւ, ո՞րքան աւելի կազդուրուեցաւ և ազնուացաւ ազգասիրութեան և գաղափարը այժմեան քրիստոնեայ ազգասէրն որբան էլ ամուր կապուած լինի իւր ազգութեան հետ, ուրիշ մարդուն « թշնամի չի համարի միայն այն պատճառով, որ նա « ուրիշ » է, ընդհակառակ նա « ուրիշին » էլ կըթողնի, որ իւր ազգութեան կոչի, որպէս զի մարդկութիւնը աւելի բեղմնաւորուի։ Ամենայն մարդ նեղ սահմանի մէջ կարող է գործել կատարեալ կերպով, և (կաւելացնէ որիշունեայ ազգասէրը) ուրիշունը է ի՞նձեւ, իսկ մի այսպիսի գաղափարը ու զգացմունք ո՛չ հասկանալի և ո՛չ ըմբռնելի էր հին մարդու համար։

Ո՞չ չի կարող հանգչել մերձաւոր հարազատութեան սէրը, որ ամենայն առաքինութեանց մայր է։ Անկարելի է լսեցնել մի որ և է բնակչութեացմունք միւսին զոհ բերելու համար։ Մարդկութիւնը ազգութիւներով կայ, ազգութիւնը — ընտանիքներով։ Եթէ փոքրը ջնջուի, մեծը ինքն ըստ ինքեան կը վերանայ։ մարդ փոքրի մէջ է վարժվում մեծը ճանաչելու։ Մարդկութեան զօրութիւնը, յառաջ մղումը — ազգերի զանազանութիւնից, նոցա բնաւորութեան, ընդունակութեանց, ջանքերի տարբերութիւնից է ծագում։ մրցումն ու մաքառումն է առաջ տանում նորան։

Ո՞չ, ազգութիւնը նախապաշարում չէ։ ընկերական կեանքն ու ոգին շատ ձեւրով է լինում, — քաղաքականը ուրիշ է, ազգայինը ուրիշ, այնպէս, ինչպէս որ կայ զոր օր։ առեստրական, ուսումնական հաւաքական կեանք։ Մարդու բնական պահանջներից մէկն է, — լինել անդամ մի որոշ ազգութեան, ընդհանուր բարոյական կեանք վարել, յատուկ աւանդութիւններ սրբութեամբ պահպանել, մի մեծ ընտանիք կազմել, հաւաքական ժառանգութիւնը խաղաղութեամբ վայելել, Խսկզրանէ անտի մարդկութեան ախորժ ընտանի է եղել այդ զգացումը։ ազգայնութեան զգացումը սպանել — սրբազնութիւն է, — Տեսէք, ո՞րքան յարգելի է Աւստրիական Սլաւոնացին, երբ դատարանի առաջ նա մերկացնում է թէ իւր հարազատ հպատակութիւնը Աւստրիայի գահին և թէ իւր ազգային միութիւնը։ Սլաւոնեան ցեղին « կամ », ինչպէս ինքն անուանում է, իւր գրականական և բարոյական միութիւնը այդ մեծ ցեղի հետ։ Ահա ո՞րքան անգամ է Ճշմարտանում Յաւիտենականի խօսքը։ կայսրինը՝ կայսրին, Աստծունը՝ Աստծուն։

Յարգելիք, մենք տեսանք, թէ ազգայնութիւնը մի ցնորք չէ, մենք տեսանք, թէ ազգայնութեան ո՞ր տարբերը ի՞նչպէս են գործում հայութեան մէջ։ բայց արդեօք հայութիւնը մի որոշ ձուլած յատկանիշ է, մի որոշ ամրողջական պատկեր է, որով մեր ազգը ջոկ և յայտնի բնութիւն է ստացել և պատպէս անջնջելի կերպով ուրիշներից զատվում է, թէ արդեօք ուրիշ ազգութեանց մէջ արդէն լուծուել և խառնուել է և մի-

այն անուամբ է զանազանվում նոցանից և ոչ թէ էական խարութիւններով։ Այս հարցի ուռւմնական և մանրամասն պատասխանը մեր հնախօսներից, պատմաբաններից, լեզուագէտներից սպասենք. ես գոչ եմ՝ առ այժմ Ար. Յովհաննիսեանի «Հայ և Հայաստանը» զբքուկից, ուր հետաքրքրութեամբ կարդում եմ, թէ ինչ տպաւորութիւն է գործում այդ ազգը օտարի վերայ։

Անհատի և ազգի հոգեկան կեանքը հեշտ չէ նկարագրվում. այդպէս էլ հայութիւնը խօսքերով դժուար է արտայայտվում, ուստի և ինքը օտարը իւր յատուկ նմանութիւններով է ճգնում Հայու մասին որոշ գաղափար կազմել և հաղորդել։ Ոմանք Հայուն կոչել են արեւելքի Անգլո—Սաքսոնացիք, գովելով նորա հաստատութեանը առանց անշարժութեան մէջ մնալու, Բարեկամութեան մուտք առանց թեթևամիտ լինելու։ Ոմանք արեւելքի Զուիցարացի են կոչել, գովելով նորա աշխատութեանը, իւրաքանչեանը կոչուելով նորա յարատե, բայց խօհեմ չործանը, ճոխ վայելչութեանց յէրածը, արտաքին փայլի արհանձնած, անլուր և անաղմուկ յառաջադիմութիւնը։

Դուք տեսնում եք, թէ Հայն անշուշտ յատուկ ցեղական առանձնայատկութիւններ ունի, որ այսպէս որոշ կերպարանքով է պատկերանում օտարի աչքում։ Բայց այլ է մի անհատի, ազգի հոգեւայրուն յատուկ բնաւորութիւնը, և այլ է նորա բարդյականութիւնը։ Մի ցեղի անհատները իրեւ ցեղ մի բնաւորութիւն կ'ունենան, իրեւ անհատներ — զանազան բարդյական նշաններ, Հայուն նկարագրել են ազահ, ժլատ, եսասէր, վաշխառու, ստրկաշունչ, և ուրիշ ո՞ր մէկ արատները հաշուեմ։ Մենք չենք արդարացնի, թէ ի՞նչ հանգամանքներ կարող էին նորան այդպէս ձեւափոխել, գիտենք իրօք, որ իւր տունը քանդողների առաջինը ինքն է եղել։ Այլ մենք, իրեւ մանկավարժներ, չը մոռանակի, թէ հոգեւայրեւում միշտ կարելի է թէ հրեշտակին և թէ սատանային նուիրել։ Հայն 4000 տարի է ապրում — որոշ ձիբերով, որոց ընդունակութիւններով՝ որ անշուշտ ընդունայն չը պէտք է կորչին. եւեւ շա է շար չէ իւնաւ, երեւ մ մէջ քործ ունի մարդկանեան հանդիսէ մզ իւստրելու։ Եթէ նա մինչեւ այժմ ձախող կերպով է մարզել իւր մոքերն ու ընդունակութիւնները, միթէ չըպէտք է գայ մի ժամանակ, որ նա անույն իւստրելունեւ ունէ իւր աղող Լուսաւորինեան քործը անդադան լուսցնէլու։

Եւ ոչ ոք չի հաւատում, թէ աշխարհքի երեսին կարող է լինել ընտիր homo, այլ ինչպէս փորձով գիտենք — կան միայն ընտիր Անգղիացի, ընտիր Փրանսիացի, ընտիր Ռուսու Եթէ Հայոց ուսուցիչը իւր պաշտօնը ճանաչել ուզենայ, աշխարհքը կ'ունենայ և ընտիր Հայեր, որոց ձիբերն ու ընդունակութիւններն էլ անկօրուստ չեն մնալ մարդկութեան համար։ Սորա համար հարկաւոր է, որ Հայն իւր առանձնայատկութիւններով կրթուի։

Ծատ ժամանակ չէ, որ մի Ռուս զարմանալի միտք յայտնեց, որը որ մեզ համար մեծ խրատ է, ապա ուրեմն խելամռւտ ևս պէտք է լինենք, եւդ. Մարկովը Հայուն Վարացու հետ համեմատելով՝ գտնում է, թէ որքան որ Հայն, դարերով և ժամանակով իւր անկախութիւնը կորցնե, լուց յետոյ, իւր միջից բոլորովին վերացրել է պատերազմական ոգին և սկսել է լոկ միայն սոսկական կեանք վարել, այնքան Վարացին գեղ էլի պահպանել է իւր առաջուայ զինուորական և ասպետական ոգին, Բայց, աւելացնում է նաև երրոր բերդ էին, և բարձրացնալու Հայն առիթ ունեցաւ է-ը շեշտան յառիւնիւների ոյժը որոպեսուելու, նա Ռուսաց գահին շնորհեց Իեհութեաններ, Տ. Պուկասեաններ, Լազարեաններ և Լոռու Մելիքեաններ, Թէ ի՞նչ հրաշքով այս հանճարեղ անուն կրողները անարատ կերպով պահպանել են իւրեանց ցեղական առանձնայատկութիւնները, մեր խնդրից դուրս է, որքան էլ որ հետաքրքրական լինի այդպիսի հետազօտութիւնը, բայց նշանաւորն այն է, որ մի Ռուս ուղղակի այդ առանձնայատկութեանց շնորհքով է բացատրում այն մեծ մարդկանց կարողութիւնները:

Ահա ինչ է նշանակում, Յարգելիք, ցեղական, ազգայնութեան տարերքի խնամելը մարդու մէջ, ուրեմն և Հայու մէջ, — Մի ազգ, որ առանձին բարձրացնելու եղանակ ունի, որ անհանդի կերպով իւր ընդհանուր հակումներ և խորշումներ է արտայայտել, որ է-ը առանձին կերպով է հասկացել կեանքի խորհուրդն ու վայելումը, որ բարձրացներ միշտ մի և նոյն գաղափարներ, բարք ու վարք, սովորութիւն է ժառանգել, — այս բոլորը կարող է թէ մարդաշեն և թէ մարդակործան կերպով գործ գնել, Մեզ մնում է, սիրելի Պաշտօնակիցք, որ մարդաշինութեան ծառայեցնենք այն ազգային ժառանգութիւնը, և որ ապագայի համար առաջացնենք զիտութեան, արուեստի, լուսաւորութեան, քաղաքակրթութեան և ամենայն առաքինութեանց ու շնորհների բարոյական զինուորներ, հանճարներ, Լոռու Մելիքեաններ:

Այժմ մի գործնական խնդրի, Ի՞նչպէս գտնենք Հայու ցեղական առանձնայատկութիւնները, որոնք այնպէս անհրաժեշտ կարեոր են կատարեալ կրթութեան համար, և ի՞նչպէս աւանդենք նոյնը մանուկին, Սիրելիք, մենք ոչինչ տալ չենք կարող մանուկին, եթէ արդէն Նախախնամութիւնից նորա մէջ մի շունչով չէ փչած, իսկ եղածը փչացնել և ժանդուած թողնել, — զժբախտաբար կարող ենք, Բայց և այնպէս արգէն զիտենք և հարցուած ենք, թէ Հայ մանուկի հոգու մէջ մի անսպառ գանձ կայ, որը որ չպէտք է ժանդուած, Մանկավարժութիւնը մի խրատ կարող է տալ, մի շտապէք, ինչ բանի համար որ մանուկը հասունացած չէ, մի ուշացնէք, ինչ որ վաղը էլ չը պիտի կարողանաք աւանդել, — այս անելուց յետոյ, թագուցուածը ինքը կ'երևայ, շեշտէ ոյժը էւ շեշտանի, և մեր նպատակի կէտն էլ միայն այս է,

Պարոնայք, Դուք այնքան փորձուած էք, որ չէք փորձի աշակերտին

սերտել տալու, թէ Հայն այս ու այն առանձնայատկութիւններ ունի, և չետք մի խրատ էլ չէք կարդայ, թէ « Դուք էլ նոյնը ունեցեք », կամ « Հայկ ու Լեռն սովորեցեք և այնպէս Հայ եղեք », Աւելորդ է Զեզ զգուշացնել այսպիսի ուսումից, Դուք քաջ գիտէք, թէ այս ուսումը միայն քաջ ճռումաբաններ պատրաստելու ուսում է:

Ես ասացի, թէ մանուկին ոչինչ տալ կարելի չէ, Արդեօք Ֆիշդ է այս ԱՀ, կայ մի բան, որը կարելի է տալ նորան կամ, աւելի լաւ և ասել, վերագրածնել նորան, որովհետեւ իւրն է, իւր սեփականը, հայուն տուեցէք այն գործիքը, որով աւելի լաւ կարող է արտայայտել իւր հոգու գաղտնիքները, իւր ցեղի հիմնական ուժը, Տուեցէք նորան այդ գործիքը, որ ինքն է ստեղծել՝ ուրիշների հետ կատարեալ կերպով հաղորդակցելու համար. տուեցէք նորան իւր բոլոր գաղափարների անօթը — հանգերձ այն բոլոր գաղափարներով, որ ինքը տարիներով ստեղծել, փայփայել և ընտանի է սեպել. տուեցէք նորան այն անխարդախ հայելին, ուր ամենաճիշտ կերպով ցոլանում է իւր հոգու և հանձարի պատկերը, — և Դուք հասած կլինիք Զեր ազնիւ նպատակին, Ազգային լեզուն է — այն անօթը, և հայկական ազգային բանաւոր ու գրաւոր ստեղծողութիւնն է — այն անօթի ներքին պարունակութիւնը, իսկ երկուքը միանդամայն — այն հայելին, Ազգային լեզուն առանց բուն ազգային պարունակութեան լոկ ձայնական հնչիւն է և դատարկ աման, Եթէ ուզում էք Զեր և Զեր ինամքին յանձնած սանիկների մէջ Ճշմարիտ հաղորդակցութիւն հաստատել, Եթէ ուզում էք նոցա մէջ ազգային տարերք խնամել, — Դուք ընտրեցէք այն միակ կամուրջը, որ Զեր և նոցա մէջ բնութիւնից հաստատուած է — այսինքն ողբային ոտեղսուրծունիւնը — ողբային լուսութիւնը, Այն ժամանակ Դուք կատարած կլինիք Զեր քաղաքակրթական կոչումը, այն ժամանակ պարծեցէք, թէ Դուք ազգային ուսուցիչ էք, այն ժամանակ Դուք Զեզ յարդած կը լինիք և Զեզ էլ յարգել կը սովորեցնէք, այն ժամանակ պէտք է որ պատիւ էլ ունենաք, և Զեր արժանիքը կը ճանաչուի, Մուրալով չի լինի պէտք է մենք ինքներս մեր գործերով բարձր ու վսեմ պահպաննք մեր դիրքը, Ուսուցիչը պէտք է արժանանայ, — և նա կը յարգուի: